

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հ. Հ. Ղարաբյոզյան

ՍԱՐԴՈՒՐԻ III-Ի ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Պարմիր-բլուրի ուրարտական թելչեբախնի ամրոցի պեղումների ժամանակ, 1956 թվականի ամռանը Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարած հնագիտական արշավախումբը բազմաթիվ թանկարժեք իրերի հետ միասին հայտնաբերեց նաև մի սեպագիր աղյուսակ, որը հրատարակվեց Ն. Վ. Հարությունյանի կողմից¹։

Հրատարակված արձանագրության տողացի թարգմանությունը հետևյալն է.

«Սարդուրին Ռուսայի որդին տվեց հրաման ուղին (?) Շանեցուն (այն) հողերը (որոնք գտնվում են) Գուդունիլի քաղաքում երկու ստրուկների հետ (?) (ինչպես) ես-անշատեցի (?) հողամասից վերադարձրու Սուեբա (?) կառավարչին (?) Կուտուբիլի ցեղի դիդինեցի (?) չինովնիկը (?) (և) արխիանեցի քարգործ վարպետը (?) քարակոթողները (սահմանաքարերը) հաղթահարեցին»²։

Գ. Ա. Մելիքիշվիլին թեև որոշ վերապահություններ ընդունում է Ն. Վ. Հարությունյանի գիտական տառադարձումը, սակայն թարգմանության վերաբերյալ սահմանափակվում է միայն որոշ կոմենտարիաներով³։ Այդ պատճառով էլ մենք կցանկանայինք հայտնել մեր դիտողությունները։

Արձանագրության 4-րդ տողի նախավերջին կիսով չափ եղծված 'h¹ վանկը պարզապես վրիպել է Ն. Վ. Հարությունյանի աչքից և գիտական տառադարձման մեջ բոլորովին տեղ չի գտել։ Նույն տողի վերջին վանկը Ն. Վ. Հարությունյանը վերականգնել է որպես Δ և ենթադրել է, որ այն ուղեորական հողովի ցուցիչ է տրական հողովի առումով⁴։ Ասկայն բնագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ սեպախմբի սկզբում չի նշմարվում բոլոր սեպի և ոչ մի հետք, իսկ երկու կարճ ուղղահայաց սեպերը չեն հատում հորիզո-

¹ Ն. Վ. Հարությունյան, 1) Պարմիր-բլուրի նորագյուտ սեպագիր աղյուսակը. «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 201—213; 2) Новая клинописная таблица из раскопок Кармир-блупа, «Festschrift Johannes Friedrich», Heidelberg, 1959, էջ 35, 51։

² Ն. Վ. Հարությունյան, էջ 212։

³ Գ. Ա. Մելիքիշվիլի, Урартские клинообразные надписи, М., 1960, Новые урартские надписи, № 64, էջ 457—458։

⁴ Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 207։

⁵ Օգտվելով առիթից շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Գիտական Գտնական թանգարանի ղերեկտոր Կ. Գ. Ղաֆադարյանին արձանագրությունը ուսումնասիրելու նպատակով մեզ ընձեռած հնարավորության համար։

նական սեպերին, այլ գտնվում են նրանց միջև: Հետևաբար այն ու սեպախումբն է:

Արձանագրության 6-րդ տողում (3 անգամ) և 9-րդ տողում (1 անգամ) հանդիպող di վանկին շատ նման սեպախումբը որպես ai ընդունելը բավականաչափ կասկածելի է: Հիշյալ սեպախմբի երկու ուղղահայաց սեպերից երկրորդը կարճ է, ճիշտ այնպես, ինչպես արձանագրության 2-րդ, 3-րդ, 8-րդ, 10-րդ տողերի a սեպախմբի և 4-րդ տողի e սեպախմբի գրության մեջ: Սակայն արձանագրության a և e սեպախմբերի երկու ուղղահայաց սեպերից երկրորդը կարճ սեպը փաստորեն իրար վրա կանգնեցրած երկու ուղղահայաց սեպերի տարատեսակն է: Հետևաբար, մեզ հետաքրքրող սեպախմբի ուղղահայաց կարճ սեպը պետք է նույնպես իրար վրա կանգնեցրած երկու ուղղահայաց սեպերի տարատեսակը համարել: Այսպիսով, ստանում ենք մի սեպախումբ, որը բոլորովին նման չէ արձանագրության 7-րդ, 9-րդ և 12-րդ տողերում հանդիպող di սեպախմբին, որտեղ երկու ուղղահայաց սեպերն էլ ունեն հավասար բարձրություն: Բնագրության տեսակետից էլ այս սեպախումբը տարբեր է di-ից, քանի որ ai վանկում նախ գծվում են ուղղահայաց զույգ սեպերը, իսկ հետո նրանց վրա զույգ հորիզոնականները, այնինչ հիշյալ սեպախմբում նախ գծված են հորիզոնականները, ապա նրանց վրա ուղղահայացները, ճիշտ այնպես, ինչպես e սեպախմբի գրության ժամանակ: Եվ եթե սեպախմբի առաջին բով սեպը համարենք u, ապա մնացածը կարելի է ընթերցել e, որով կստանանք ue լիգատուրան, որը սեպագիր լեզուներից առաջին անգամ հանդիպում է ուրարտերենում: Երանում կարելի է համոզվել թեկուզ և նրանով, որ ուրարտերենում u-e սովորական կապակցության փոխարեն հանդիպում է նաև u-e կապակցությունը, ինչպես KUR^uSu-ra-u-e և KUR^uBi-a-i-na-u-e փոխանակ հաճախակի օգտագործվող KUR^uSu-ra-u-e և KUR^uBi-a-i-na-u-e ձևերի, քանի որ ուրարտերենում շատ հաճախ այլ բառերում ևս u-ն փոխարինվում է u-ով:

Սույն ue լիգատուրան հավանաբար եղել է դիֆտոնգ և արտասանվել է ue կամ we. մի երևույթ, որը կրահել է տալիս, որ ձայնավոր և բաղաձայն հնչյուններից բացի ուրարտերենում գոյություն են ունեցել նաև դիֆտոնգներ:

Արձանագրության 8-րդ տողի er տառադարձված սեպախումբը պետք է ընթերցել ri:

Ելնելով արձանագրության ընդհանուր բովանդակությունից, կարելի է եզրակացնել, որ քարակոթողը պետք է եղած լինի մեկը, ուստի 11-րդ տողի վերջին li վերականգնված վանկը պետք է վերականգնել l, հետևաբար 12-րդ տողի վերջին պետք է վերականգնել ոչ թե li, այլ ու:

Այս ուղղումներից հետո արձանագրության գիտական տառադարձությունը կստանա հետևյալ տեսքը.

1. ¹D¹Sar₅-du-ri-i-še

2. ¹Ru-sa-a-ḫ[i-n]i-[še]

3. a-ru-ù-ni [ba]-¹ù¹-[še]

4. ¹U¹-din \ ¹Sa-ni-e-¹ḫi¹-ni

5. K¹₁TIM·MES \ URUQu-du-na

6. II-ue ¹ERUM-ue \ qu-tu-ra-ue

7. É-ni \ bi-di-i
8. ¹hu-ri-a-i \ ¹Qu-tu-bi-li-¹i¹
9. ¹Ue-di-ni-še ¹BI·[LUL]
10. ¹A-bi-li-a-ni-še ¹ZA·[DI·M·MA]
11. NA^upu-lu-si-ni-[i]
12. 'a-al-di-tù-ù-[ni]

Արձանագրության առաջին երկու տողերից իմանում ենք փաստաթղթի հեղինակի՝ ուրարտական թագավոր Սարգուրի III-ի (645—635 թթ. մ. թ. ա.), Թելլեքաինի ամրոցի հիմնադիր Ռուսա II-ի (635—645 թթ. մ. թ. ա.) որդու անունը: Արձանագրության պատկանելիությունը, ինչպես նշված է Ն. Վ. Հարությունյանի մոտ՝, հաստատվում է նաև աղյուսակի ներքևի արքայական կնքադրոշմով, որտեղ կարդացվում է հետևյալը.

... ri ¹Ru-sa ¹D^Sar_s-du-ri...

Ասկայն իրականում այն պետք է լիներ ¹D^Sar_s-du-ri ¹Ru-sa-^{<hi>} «Սարգուրի՝ Ռուսայի որդի», ուր գլանաձև կնիքի բարակ լինելու հետևանքով ^{hi} «որդի» նշանակող վանկը չի տեղավորվել:

Արձանագրության 3-րդ տողում տրված հրամանը ուղղված է 4-րդ տողի տրական հոլովի որոշյալ առումով տրված ¹u-din կոչվող անձնավորությանը: Սույն ¹u-din ձևը փաստորեն ¹u-di-ni հոլովաձևի կրճատ գրության ձևն է: Ուրեմն բառի ուղիղ ձևը կլինի ¹u-di:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արձանագրությունը գտնված է կարմիր-բլուրում, որտեղ նստում էր ուրարտական փոխարքան, և որին հավանաբար ուղարկված էր քննարկվող փաստաթուղթը, ապա կարելի է ենթադրել, որ udi կարող է նշանակել «փոխարքա» և շատ հնարավոր է, որ պահպանված է հայերենի «ավատ» բառի մեջ, քանի որ ուրարտերենի u-ն հայերենում տալիս է նաև «ավա», ինչպես tuluri մեր թարգմանությանը «տաղավար» և մի շարք այլ բառերում, իսկ di վանկը՝ «տ», ինչպես Diahi «Տալք»:

Կարելի է ենթադրել, որ սույն udi բառը ուրարտերենում հանդիպում է նաև a-u-di ձևով: Այսպես օրինակ, Արճակ լճից արևելք գտնված մի անծանոթ ծագման արձանագրության մեջ ասված a-u-¹u-di-ni-e-i URU-e-i բառերը՝ մեր կարծիքով նշանակում են «Սալդինի քաղաքի փոխարքան» կամ գուցե «Սալդինի քաղաքի քաղաքապետը»: Հետևաբար նույն լճից արևելք Տոնի գյուղի մոտակայքում Ռուսա I-ի (735—714 թթ. մ. թ. ա.) թողած արձանագրության մեջ ասված a-u-di ¹Ru-sa-hi-na-¹u-[e] բառերը՝ պետք է թարգմանել «Ռուսախինայի քաղաքապետը» կամ «Ռուսախինայի ավատը»:

Արձանագրության 4-րդ տողում հիշատակված ¹sa-ni-e-¹hi-ni հատուկ անունը փաստորեն տրված է տրական հոլովով և համաձայնեցված է նույն տողի ¹u-din բառի հետ: Ուրեմն նրա ուղիղ ձևը պետք է լինի ¹Saniehi: Եթե ընդունենք, որ այս ձևը ուրարտական սովորական հայրանուն է, ապա կարող

¹ Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 209, ծանոթ. 4:

² Г. А. Мелникшвили, УКИ № 301, տող 3, էջ 356:

³ Там же, № 368, տող 24, էջ 331:

ենք ընկնել հակասության մեջ, քանի որ այնտեղ բացակայում է հիշյալ պաշտոնյայի անունը: Հետևաբար պետք է ընդունենք, որ այն կամ ցեղանուն է, կամ ցեղանվան որոշիչով տեղանուն, ինչ որ հատուկ է ուրարտական տեղանուններին: Մենք հակված ենք ընդունելու, որ Saniēu-ն տվյալ դեպքում տեղանուն է:

Արձանագրության 5-րդ տողի Quduna քաղաքանունը տրված է տրական հոլովով, բայց հավանաբար ոչ թե հոգնակի թվով, ինչպես եզրակացնում է Ն. Վ. Հարությունյանը⁹, այլ եզակի թվով: Պետք է նկատել, որ ուրարտերենում, երբ բառը վերջանում է a ձայնավորով, ապա տրական հոլովի ցուցիչ a-ն ձուլվում է այդ ձայնավորի հետ¹⁰: Այսպես օրինակ, Սարդուրի II-ի (764—735 թթ. մ. թ. ա.) տարեգրության մեջ ասվում է: DUB-t [e] [U]RU.II-da-mu-šā te-ru-bi¹¹ «Իլդամուշայում արձանագրություն գրեցի»: Հետևաբար Quduna ձևը կարելի է դիտել նաև որպես քաղաքանվան ուղիղ ձև: Շատ հնարավոր է, որ սույն կուղունա քաղաքը Թեյշեբաինիի ամրոցին առընթեր քաղաքի անունն է:

Արձանագրության 6-րդ տողի II-ue^{LU} ERU.M-ue բառերը կարելի է թարգմանել տրական հոլովով ճերկու ստրուկներին՝ կամ ճերկու հպատակներին», որոնց վանկագիր գրությունը կլինի ta-ra-ue^{LU} bu-ra-ue: Նույն տողի quturaue բառը իր ձևով համաձայնեցված լինելով նախորդ երկու բառերին, ենթադրելի է տալիս, որ այն կարող է լինել ածական: Գարելի է կարծել, որ նրա ուղիղ ձևը պետք է լինի quturi, ճիշտ այնպես ինչպես manuri, ogauri, uš-turi և այլ ածականներ: Այս դեպքում quturaue հոլովաձևի արմատը կլինի quturi, որը կթե որոշ կապ ունենա kutu- «հասնել» բառի հետ, ապա quturaue կարող է նշանակել «առաքված»: Սակայն այս դեպքում արձանագրությունը դառնում է բավականաչափ անհասկանալի, իսկ նրա թարգմանությունը՝ համարյա անհնարին: Ավելի հավանական կարելի է համարել այն, որ quturaue-ն բալ է և տրված է հրամայական եղանակի եզակի թվի երկրորդ դեմքով, որը, ինչպես նկատել է Ն. Վ. Հարությունյանը, պահպանված է հայերենի «կոտորել» բառի մեջ¹²: Եվ քանի որ հայերենի «կոտորել» բառը ունի նաև «մասերի բաժանել» նշանակությունը¹³, ապա տվյալ դեպքում quturaue բայաձևը պետք է թարգմանել ոչ թե «կոտորի՛ր», այլ «բաժանի՛ր»: Շատ հնարավոր է, որ սույն quturaue բայաձևը համաձայնեցված լինելով II-ue^{LU} ERUM-ue բառերին, ցույց է տալիս բայի հրամայականի հղանակի երկակի ձևը, որը ուրարտերենում հանդիպում է առաջին անգամ:

Արձանագրության 7-րդ տողի bidı բառը մեր կարծիքով նշանակում է ոչ թե «վերադարձրո՛ւ», այլ «դիմաց», «հանդեպ», «առջև», քանի որ šuinia bidie կապակցությունը Գ. Ա. Մելիքիշվիլին թեև թարգմանում է «լճի ափին», սակայն ավելացնում է, որ «առաջի այն նշանակում է «լճի կողմը», «լճի մոտ»¹⁴: Եվ իրոք, այն ավելի պարզ երևում է Իշպուրինի (825—810 թթ. մ. թ. ա.) և Մենուայի (810—786 թթ. մ. թ. ա.), Վանում, Մհերի դռան արձանագրությունից, ուր ասված է հետևյալը.

⁹ Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ. էջ 207:

¹⁰ Գ. Ա. Меликишвили, նշվ. աշխ., էջ 59:

¹¹ Գ. Ա. Меликишвили. УКН № 155 Д, տող 11—12, էջ 81:

¹² Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 208:

¹³ Հ. Հ. Սահակյան, Հայերեն արժատական բառարան, հատ. 3, էջ 1352:

¹⁴ Գ. Ա. Меликишвили, УКН № 128, А 2, ծանոթ. 5, էջ 237:

25. ¹Jš-pu-ù-i-ni-še ^{1D}Sar₅-du-ri-ù-i-ni-še

a-li ¹Me-nu-a-še ¹Jš-pu-ù-i-ni-ù-i-ni-še

^DHal-di-ni be-di ša-ni qa-ab-qa-ri-li-ni¹⁵,

Այստեղ գործողությունը, որը արտահայտված է qabgarilini բայով, թեև պատմվում է Բշպուինի կողմից, բայց կատարում է Մենուան: Գործողությունն իր վրա է կրում šan քառը, որը ըստ Բ. Ա. Սելիքիշվիլու նշանակում է «աման»: Սակայն ավելի ճիշտ է Գ. Ա. Ղափանցյանը, երբ ուրարտերենի šani-ն կապում է հայերենի «սան» բառի հետ, թարգմանելով այն «կաթսա»¹⁷, մի տեսակետ, որը հետագայում ընդունվեց նաև Ի. Մ. Դյակոնովի կողմից¹⁸, Այսպիսով, Մենուան սանի (կաթսայի) հետ ինչ որ գործողություն է կատարում, որի տեղը արտահայտված է ^{1D}Haldini bedi դարձվածքով: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ արձանագրությունը կրում է կրոնական բնույթ, և այնտեղ թվարկված են ուրարտական պանթեոնի բոլոր աստվածների համար կատարվող զոհաբերությունները, ապա վերոհիշյալ արտահայտությունը պետք է նշանակի «Պալլադի առջև»: Նկատենք նաև հետևյալը: Սարգուրի II-ը իր արձանագրություններից մեկում, որ գտնված է Արմավիրից, խոսելով Արմավիրի ամրոցի մասին նշում է.

7. ... a-lu-ki-e bi-di-i

8. ¹Ar-giš-ti-ni ^{1D}Sar₅-du-ri-ni

9. gu-bu-uš-ta-li ...¹⁹

Եթե gubustali բայը այստեղ պայմանական կերպով ընդունենք «մաքառեցին», ապա հատվածը կարելի է թարգմանել այսպես. «որի դիմաց Արգիշտին (և) Սարգուրին մաքառեցին»:

Այսպիսով, քննարկվող արձանագրության E-ni bi-di-i արտահայտությունը նշանակում է «տան դիմաց», ուր ni ձևը սեռական հոլովի ցուցիչն է, որը նկատելի է ոչ միայն ^{1D}Haldini bedi «Պալլադի առջև», այլ meše «հարկ» բառից կազմված mešini pil «հարկի տակ» արտահայտության մեջ:

Արձանագրության 8-րդ տողի ¹hu-ri-a-i ¹Qu-tu-bi-li-i բառերը տրված են սեռական հոլովով: Բայց չնայած այն բանին, որ երկու բառերն էլ այստեղ օգտված են ցեղի կամ անձնանվան որոշիչով, այնուամենայնիվ առաջին բառը մենք հատուկ անուն չենք համարում, քանի որ ուրարտական արձանագրություններում չի հանդիպում որևէ անձնավորություն, որ երկու անվամբ հանդես գա: Բացառություն են կազմում անվամբ և հայրանվամբ կոչվող անձնավորությունները, սակայն մի պայմանով, որ հայրանվան վրա ավելացվում է hi մասնիկը: Բայց քանի որ այստեղ այդ օրինաչափությունը բացակայում է, ապա դժվար է ասել, որ այս երկու բառերն էլ անձնանուն են: Մեր կարծիքով, huriai բառը, որ շատ նման է hurri ժողովրդի (ուրարտա-

¹⁵ Г. А. Меликишвили, УКН № 27, տող 25, էջ 144:

¹⁶ Там же, Указатель, էջ 406:

¹⁷ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 38 և 63:

¹⁸ И. М. Дьяконов, Материалы к фонетике урартского языка. Сб. «Вопросы грамматики и истории восточных языков», 1958, էջ 37:

¹⁹ Г. А. Меликишвили, УКН № 169, տող 7—9, էջ 315:

ցիների ցեղակիցների) անվանը, ցույց է տալիս Qutubili անունը կրող անձնավորության ցեղային պատկանելիությունը: Եթե սա այսպես է, ապա ամբողջ տողը պետք է թարգմանել ժողովրդի Կուտուրիլի:

Այս տեսակետը կարելի է հաստատել թեկուզ և նրանով, որ Արարատյան դաշտի և բուն ուրարտական տերիտորիայի ցեղերի միջև կար որոշ տարբերություն, և ժողովրդի Կուտուրիլին հավանաբար տեղաբնիկներից չէր, որի համար էլ վերջիններս նրան հորջորջում էին նրա ցեղային անվամբ: Այդ անունը հավանաբար քաղաքացիություն էր վայելել շրջապատում և ընդունվել էր նաև ուրարտական արքունիքում: Հավանաբար ցեղանվան այս տիպի օգտագործման հետևանքով է, որ նույն *huria* բառը վերածվել է հատուկ անվան և պահպանվել է հայկական ձևով՝ անձնանվան մեջ, որի ծագումը մինչև այժմ համարվում էր անհայտ²⁰:

Արձանագրության 12-րդ տողում հիշատակվող 'a-al-di-tu-u-[ni] բալի *aldubi* ձևի մասին կան բավականաչափ հակասական կարծիքներ: Այսպես օրինակ, Մ. Ծերեթելին 'aldubi բալը թարգմանում է «հողացի», «ողորմացի», «գթացի», «խնայեցի»²¹: Յ. Ֆրիդրիխը ենթադրում է, որ 'aldubi-ն պետք է թարգմանել «ստրկացի»²²: Գ. Վ. Մելիքիշվիլին հնարավոր է համարում սույն բալի «հողալ», «բարերարել», «խնամել», «գթալ» նշանակությունները²³: Ի. Մ. Դյակոնովը, վիճարկելով Մ. Ծերեթելու և նրան հետևող Գ. Վ. Մելիքիշվիլու կարծիքները, ուրարտերենի 'aldubi բալը թարգմանում է «հողթահարեցի-ևս-նրան»²⁴: Ն. Վ. Հարությունյանը չնայած ասում է, որ 'aldubi-ն ունի «հող տանել» իմաստը, սակայն հետևելով Ի. Մ. Դյակոնովին, թարգմանում է «հողթահարել»²⁵: Ինչորովին այլ է Ի. Վ. Ղափանցյանի կարծիքը, որը և հիշյալ բալը թարգմանում է «զգեցի»²⁶: Ուստի 'aldubi mešini pli արտահայտությունը ըստ Գ. Վ. Ղափանցյանի նշանակում է «զգեցի հարկի տակ»²⁷: Այս թարգմանությունը թեև ոչ վերջնական, բայց եղածների մեջ պետք է համարել ամենաճիշտը, քանի որ «զգեցի» տակով Գ. Վ. Ղափանցյանը փաստորեն հասկանում է «զրեցի»: Ուստի ավելի ճիշտ կլինի եթե 'aldubi mešini pli արտահայտությունը թարգմանվի ոչ թե «զգեցի հարկի տակ», այլ «զրեցի հարկի տակ»: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ 'aldubi mešini pli արտահայտությունը հանդիպում է այն ժամանակ, երբ ուրարտացի այս կամ այն թագավորը պատմելով իր արշավանքի մասին, նշում է, որ ինքը այլև, քանզի ու ոչնչացրել է թշնամա երկիրը: Ինականաբար դրան հաջորդում է bura astubi «ստրկացի» արտահայտությունը: Հայտնի է, որ եթե մեկը ստրկացվում է, ապա ենթարկվում է նաև հարկատվության: Հետևաբար, aldubi mešini pli նշանակելու է «զրեցի հարկի տակ», մտածողության մի

²⁰ Հ. Հ. Ղարազյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 828:

²¹ M. Tseretheli. Die neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu Heidelberg, 1928, էջ 38:

²² J. Friedrich, Einführung ins Urartäische, Berlin, 1933, էջ 51:

²³ Г. А. Меликишвили, УХН, Указатель, էջ 387:

²⁴ И. М. Дьяконов, Գրախոսական՝ Г. А. Меликишвили, Нагри-Урарту, 1954, ВДМ, 1956, № 2, էջ 67, ծանոթ. 3:

²⁵ Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 212:

²⁶ Գ. Վ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 107 և 108:

²⁷ Նույն աւոոում:

ձև, որը հետագայում մոխրանցավ է հայերին: Այսպես օրինակ, դրարարում հանդիպում է Շրնդ հարկաւ արկանել» արտահայտությունը, որը ամբողջովին համընկնում է ուրարտական վերոհիշյալ ձևի հետ: Բայց քանի որ 'aldubi բառի մասին մինչև այժմ եղած կարծիքները կասկածելի էին, իսկ քննարկվող արձանագրությունը նրանք իրենց նշանակությունը կորցրին, ապա 'aldubi-ն «գրեցի» թարգմանելը միանգամայն հնարավոր է, մանավանդ որ քննարկվող արձանագրությունը այդ թարգմանությունը միանգամայն արդարանում է:

Ուրեմն 'alduuni պետք է նշանակի «թող-դնեն-նրանք-այն», որը սովորական թարգմանությունը կլինի «թող դնե՛ն»:

Այսպիսով, քննարկվող արձանագրության թարգմանությունը կլինի հետևյալը.

«Սարգսուրին՝ Ռուսայի որդին, հրաման տվեց Շանիեխի ավատին.— Հողերը Կուղունայում երկու հպատակների բաժանիր: Սուրբիտ Կուտուբիլիի տան դիմաց ուեդինեցի պաշտոնյան և արիլիանեցի քարտաշը քարակոթող թող դնե՛ն»:

Ձեռնպահ ստալով ընդհանուր եզրակացություններ անելուց, նկատենք, որ արձանագրության մեջ հիշատակվող քարակոթողը տվյալ դեպքում ոչ թե ուրարտական սովորական արձանագրություն է, այլ սահմանաքար, ինչպես նկատել է Ի. Ս. Դյակոնովը²⁸, քանի որ խոսքը վերաբերում է հողերի բաժանմանը:

Նշենք նաև, որ սահմանաքարեր դնելու ուրարտական այս սովորությունն է երևի, որ հետագայում իր զարգացումն է գտնում Հայաստանում, երբ հայոց թագավոր Արտաշես I-ը (189--160 թթ. մ. թ. ա.) սահմանաքարեր է կանգնեցնում տարբեր հողամասերի միջև, որը նշված է Մովսես Խորենացու մոտ²⁹ և հաստատված է հնագիտական մի շարք գլուխներով:

²⁸ Ն. Վ. Հարությունյան, Նշվ. աշխ., էջ 212:

²⁹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք I, գլ. 56, Տփղիս, 1813, էջ 186: